ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/18

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Է. Սարգսյանի և Հ. Ենգոյանի (լիազորագրեր՝ տրված 17.02.2022թ.),

քննելով «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից 11.02.2022թ. ներկայացված (14.02.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/18 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 11.02.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից 24.12.2021թ. վիճարկվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշումները:

Վերոհիշյալ բողոքի հիման վրա գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանը 24.01.2022թ. կայացրել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 որոշումը, որով բողոքը բավարարվել է մասնակի և դադարեցվել է 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը, որից հետո ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից ընդունվել են համապատասխան որոշումներ:

Սույն բողոքով վիճարկվում է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից 24.01.2022թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 որոշումից հետո հանձնաժողովի կայացրած որոշումները և իրականացված գործողությունները:

Ուստի խնդրում ենք «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքը չդիտարկել որպես համանման նախորդ ներկայացրած բողոքի, այն ընդունել վարույթ և քննել:

Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար՝ ՀՀ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի 1-ին մասի 1-ն բաժնի համաձայն՝ աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Ընթացակարգի հրավերի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար՝ ՀՀ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև աշխատանք), որը խմբավորված է 3 չափաբաժնում՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	Մ-4 Երևան - Սևան - Իջևան – Ադրբեջանի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ80+920 վրա գտնվող Դիլիջանի թունելի
2	Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր -Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ137+100 Պուշկինի թունելի
3	Մ-7 /Մ-3/ - Սպիտակ – Գյումրի - Թուրքիայի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ4+500 Նալբանդի թունելի

Ընթացակարգի հրավերի 5.3-րդ կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ի՝ գնային առաջարկի համաձայն՝ .... առաջարկվում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով:

Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ի՝ Պայմանագրի նախագծի 1.2-րդ կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականաի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ի՝ Պայմանագրի նախագծի 7.16-րդ կետի համաձայն՝ 2023 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի առաջին չափաբաժնի մասով, «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ–ի կողմից հայտով ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝ պայմանագրով նախատեսված ողջ ժամկետով նախատեսված աշխատանքների կատարման համար .

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/

1	2	3	4	5=3+4
1	Մ-4 Երևան - Սևան - Իջևան – Ադրբեջանի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ80+920 վրա գտնվող Դիլիջանի թունելի	625 000 000	125 000 000	750 000 000

Մյուս մասնակիցների կողմից գնային առաջարկը ներկայացվել են միայն 2022թ. նախատեսված աշխատանքների կատարման համար:

Սույն ընթացակարգով 17.12.2021թ. տեղի է ունեցել գների շուրջ միաժամանակյա բանակցություններ և մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջակները.

Մասնակցի գրաղեցրած տեղը և անվանումը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել «X»/	Մասնակցի առաջարկած գինը առանց ԱԱՀ
1	Ճանապարհ ՍՊԸ	X	49,999,999
2	Նաիրի-Նունե ՍՊԸ		50,000,000
3	Ծովագյուղի ՃՇՇ ՍՊԸ		99,500,000
4	Քյավառ սերվիս		106,000,000
5	Ճան Շին ՍՊԸ		106,500,000
6	ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ ՍՊԸ		500,000,000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. տեղի ունեցած նիստով «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձը գրավոր ներկայացրել է դիրքորոշում, որով նշվել է հետևյալը.

««ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով աշխատանքների կատարման համար սահմանվել է 5 տարի ժամկետ և «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը է ներկայցվել պայմանագրի իրականացման համար 750 000 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը առաջարկվել է պայմանագրի կատարման համար աշխատանքների իրականացման նպատակով հրավերով սահմանված ողջ ժամանակահատվածի համար՝ որևէ հղում ուղղորդում գնային առաջարկի ներկայցման մեկ տարվա հաշվարկով ներկայացնելու առկա չի եղել հրավերով:

Վերոգրյալով պայմանավորված՝ գների նվազեցման ժուրջ բանակցությունների ընթացքում և առաջարկ ներկայացվել է մեր կողմից հրավերով սահմանված ողջ ժամանակահատվածի ընթացքում աշխատանքների իրականացնելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ միաժամանակյա բանակցությունների ընթացքում «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձը գրավոր ներկայացրել է դիրքորոշում, որին ի պատասխան գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է պարզաբանում, որ գնային առաջարկը անհրաժեշտ էր ներկայացնել մեկ տարվա սպասարկման արժեքի չափով՝ առաջնորդվելով հրավերով ներկայացված պայմանգրի նախագծի 4.1 կետով սահմանված է, որ «Պայմանգրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2022թ. համար կազմում է _____/___տառերով__/ ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:», ինչից պարզ է դառնում, որ գնային առաջարկն անրաժեշտ է ներկայացնել մեկ տարվա համար: Ինչպես նաև բանակցություններից առաջ քարտուղարի կողմից ներկայցավել է բանակցման կարգ, որով սահմանվել է, որ բանակցում են մեկ տարվա արժեքի շուրջ:

«ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից 24.12.2021թ. վիճարկվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշումները:

Վերոհիշյալ բողոքի հիման վրա գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանը 24.01.2022թ. կայացրել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 որոշումը, որով բողոքը բավարարվել է մասնակի և դադարեցվել է 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը: Վերոհիշյալ որոշմամբ բողոքներ քննող անձը արձանագրել է, որ բանակցությունների ընթացքը չձայնագրելը/տեսաձայնագրելը հանդիսանում է ՀՀ կառավարության 526-Ն որոշման 26-րդ կետի 5-րդ ենթակետի խախտում, և որի պայմաններում առանց բանակցությունների տեսաձայնագրության և ձայնագրության հնարավոր չէ ապացուցված փաստ համարել այն հանգամանքը, որ մասնակիցները ներկայացրել են միավորի գներ:

ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.02.2022թ. հրավիրված նիստի ժամանակ, որը տեսաձայնագրվել է, գնահատող հանձնաժողովը մասնակիցների ներկայացմամբ հաստատել է, որ բացի «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ից, բոլոր մյուս մասնակիցները 1-ին չափաբաժնի մասով հայտով

ներկայացրած և բանակացությունների ժամանակ առաջարկած գնային առաջարկներով ներկայացրել են միավորի գին՝ մեկ տարվա աշխատանքների համար: Նույն նիստի արձանագրության համաձայն՝ կայացվել է որոշում առաջին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու տեքստը հաստատելու վերաբերյալ:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ:

Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.–ի թիվ 526–Ն որոշմամբ (10.10.2019թ.–ի թիվ 1422–Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի

հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.–ի թիվ 526–Ն որոշմամբ (10.10.2019թ.–ի թիվ 1422–Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 51-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագրի գինը կայուն է, եթե պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում, ապրանքները մատակարարվում և ծառայությունները մատուցվում են մինչև երեք տարվա ընթացքում: Եթե հրավերում և պայմանագրում նշված չէ, որ պայմանագրի գինը գործոնային է, ապա պայմանագրի գինը համարվում է կայուն՝ անկախ պայմանագրի կատարման ժամկետից:

Կարգի 53-րդ կետի համաձայն՝ պայմանագրի գինը կարող է լինել գործոնային՝ այդ պայմանը հրավերով ու պայմանագրով նախատեսված լինելու դեպքում, եթե՝

1) պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարվում, ծառայությունները մատուցվում և աշխատանքները կատարվում են պայմանագրի կնքման օրվանից երեք տարին գերազանցող ժամանակահատվածում՝ միայն երեք տարին գերազանցող ժամանակահատվածի համար պայմանագրով նախատեսված գների փոփոխության հնարավորությամբ.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ դեպքերում:

Կարգի 54-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը գործոնային է, հրավերով նախատեսվում են՝

1) բոլոր այն պայմանները (այսուհետ՝ արտաքին գործոններ), որոնց փոփոխությամբ պայմանագրի գինը կարող է փոփոխվել.

2) արտաքին գործոնների փոփոխությամբ պայմանագրի գնի փոփոխման կարգը:

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի 1-ին մասի 1-ն բաժնի համաձայն՝ աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Ընթացակարգի հրավերի 1.1 կետով ամրագրվել է, որ գնման առարկա է հանդիսանում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար՝ ՀՀ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերումը:

Ընթացակարգի հրավերի 5.3-րդ կետը ամրագրում է, որ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ի՝ գնային առաջարկի համաձայն՝ առաջարկվում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով:

Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ի՝ պայմանագրի նախագծի 1.2-րդ կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականաի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Միևնույն ժամանակ, Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ի՝ Պայմանագրի նախագծի 7.16-րդ կետի համաձայն՝ 2023 և հաջորդող տարիներին աշխատանքներու կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Տվյալ ընթացակարգով բոլոր մասնակիցները, բացի «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ–ից, գնային առաջարկը ներկայացրել են մեկ տարվա համար նախատեսված աշխատանքների համար:

Վերոհիշյալ փաստը հաստատվում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.02.2022թ. նիստի արձանագրությամբ:

Այսպիսով, բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

Հրավերով սահմանվել է, որ աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում: Միևնույն ժամանակ, Հավելված 6-ի՝ պայմանագրի նախագծի, 1.2-րդ կետը ամրագրել է, որ պայմանագրով նախատեսված աշխատանքը պետք է կատարվի հինգ տարիների համար՝ մինչև 2026 թվականաի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Ըստ նույն Հրավերի՝ 2022թ. համար պետք է կնքվի պայմանագիր, իսկ հաջորդ տարիների համար՝ համաձայնագրեր:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ հրավերով նախատեսվել են աշխատանքների կատարումը 2022-2026թթ. համար, քանի որ վերոհիշյալը ուղղակիորեն ամրագրված է Ընթացակարգի հրավերով:

Հավելված 2-ով՝ գնային առաջարկով, հստակ նախատեսվել է, որ տվյալ ընթացակարգով նախատեսված աշխատանքի, այսինքն աշխատանքի համար, որը պետք է կատարվի 2022-2026թ., ներկայացվում է ընդհանուր գին:

Հրավերում բացակայում է որևէ նշում առ այն, որ պայմանագրի գինը գործոնային է, ինչպես դա պահանջում է գործոնային գնի դեպքում Կարգի 53-րդ և 54-րդ կետերը:

Հրավերում բացակայում է նշում առ այն, որ հայտով գնային առաջարկը պետք է ներկայացվի ոչ թե նշված հինգ տարիների, այլ մեկ տարվա համար, այսինքն միավորի գնով:

Տվյալ պարագայում գտնում ենք, որ անհիմն է ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները բոլոր մեկ տարվա գին առաջարկած մասնակիցների հայտը բավարար գնահատելու, և առավել ևս միավորի գին առաջարկած մասնակցի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը բացի Բողոքաբերից, մյուս մասնակիցների հայտերը պետք է գնահատեր անբավարար և մերժեր՝ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի ուժով, քանի որ հենց գնահատող հանձնաժողովն է փաստում, որ մասնակիցների կողմից առաջարկվել է միավորի, այլ ոչ թե ընդհանուրի գին, կամ պետք է մասնակիցների կողմից ներկայացված գնային

առաջարկները դիտարկվի որպես 5 տարիների համար առաջարկված ընդհանուր գին և պահանջի, որպեսզի նախատեսված 5 տարվա աշխատանքները կատարվեն վերոհիշյալ գնով:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքներ քննող անձին խնդրում եմ՝

Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Ճանապարհ», «Նաիրի-Նունե», «Ծովագյուղի ՃՇՇ», «Քյավառ սերվիս», «Ճան Շին» ԱՊԸ-ների հայտերը մերժելու վերաբերյալ:

Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

կամ

Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին բանակցությունների արդյունքում նվազեցված գնային առաջարկները դիտարկել որպես 2022-2026թթ. նախատեսված՝ 5 տարիների համար առաջարկված աշխատանքների կատարման համար պայմանագրի ընդհանուր գին»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 18.02.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

2. <u>«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 15.02.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/2635-2022 գրությամբ դիմել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին՝ ներկայացնելով պահանջ «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը տրամադրելու վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված գրության՝ Պատվիրատուն 18.02.2022թ. թիվ 01//497-2022 գրությամբ տրամադրել է Ընթացակարգի բոլոր փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 18.02.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/18 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/18 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որը իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասի հիման վրա:

2. Ընթացակարգի հրավերի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար՝ ՀՀ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև աշխատանք), որը խմբավորված է 3 չափաբաժնում՝

Չափաբաժինների	Չափաբաժնի անվանումը

համարները	
1	**Մ-4 Երևան - Սևան - Իջևան – Ադրբեջանի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ80+920 վրա գտնվող Դիլիջանի թունելի**
2	Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր -Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ137+100 Պուշկինի թունելի
3	Մ-7 /Մ-3/ - Սպիտակ – Գյումրի - Թուրքիայի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ4+500 Նալբանդի թունելի

Աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

3. «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գործողությունների իրավաչափությունը:

4. Ընթացակարգի հրավերի հավելված 2-ի՝ գնային առաջարկի համաձայն՝

Ուսումնասիրելով «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս»* ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	***4***	***5=3+4***
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			

5. Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ի՝ պայմանագրի նախագծի 1.2-րդ կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

6. Պայմանագրի նախագծի 7.16-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

2023 և հաջորդող տարիներին աշխատանքներու կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

7. Պայմանագրի նախագծի հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 31.12.2026թ.-ը:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով՝ մասնակիցների կողմից առաջարկված գներն են՝

1. Քյավառ սերվիս	120, 000,000	24,000,000	144,000,000
2.Ճան Շին ՍՊԸ	150,000,000	30,000,000	180,000,000
3. Ծովագյուղի ՃՇՇ ՍՊԸ	167,000,000	33,400,000	200,400,000
4. Ճանապարհ ՍՊԸ	180,000,000	36,000,000	216,000,000
5. Նաիրի-Նունե ՍՊԸ	350,000,000	0	350,000,000
6. ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ ՍՊԸ	625,000,000	125,000,000	750,000,000

9. Նույն արձանագրության 9-րդ կետի 9.1-րդ ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, և որ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որոշում է կայացրել նիստը կասեցնել և էլեկտրոնային ձևով ծանուցել բավարար գնահատված մասնակցին 17.12.2021թ. ժամը 15:00-ին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 2.1-րդ ենթակետի համաձայն՝ 17.12.2021թ. հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին ներկայացել են հրավիրված բոլոր մասնակիցները, բացի «Մ. Բուատ» ՍՊԸ-ի և Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ի:

Մասնակիցները Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջարկել են պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

1. Ճանապարհ ՍՊԸ	49, 999, 999	10,000,000	59,999,999
2. Նաիրի-Նունե ՍՊԸ	50,000,000	0	50,000,000
3. Ծովագյուղի ՃՇՇ ՍՊԸ	99,500,000	19,900,000	119,400,000
4. Քյավառ սերվիս	106,000,000	21,200,000	127,200,000
5. Ճան Շին ՍՊԸ	106,500,000	21,300,000	127,800,000
6. ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ ՍՊԸ	500,000,000	100,000,000	600,000,000

11. Նույն արձանագրության 2.2-րդ ենթակետի համաձայն՝ միաժամանակյա բանակցությունների ընթացքում «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձը գրավոր ներկայացրել է դիրքորոշում, որին ի պատասխան՝ գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է պարզաբանում, որ գնային առաջարկը անհրաժեշտ էր ներկայացնել մեկ տարվա սպասարկման արժեքի չափով՝ առաջնորդվելով հրավերով ներկայացված պայմանագրի նախագծի 4.1 կետով, որով սահմանված է, որ «Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2022թ. կազմում է _____ (____տառերով____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:», ինչից պարզ է դառնում, որ գնային առաջարկն անհրաժեշտ էր ներկայացնել մեկ տարվա համար:

Ինչպես նաև բանակցություններից առաջ քարտուղարի կողմից ներկայացվել է բանակցման կարգ, որով սահմանվել է, որ բանակցում են մեկ տարվա արժեքի շուրջ:

12. Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Ճանապարհ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

13. «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից 24.12.2021թ. բողոք է ներկայացվել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որի վերաբերյալ Լ. Օհանյանի կողմից 24.01.2022թ. կայացվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 որոշումը, համաձայն որի «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի բողոքը բավարարվել է մասնակի, այն է՝ պարտավորեցվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին և 17.12.2021թ. նիստի թիվ 4

արձանագրությամբ կայացված որոշումները՝ 1-ին չափաբաժնի մասով, այն հիմնավորմամբ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված դրույթը, որի արդյունքում խախտվել է Օրենքի 3-րդ և 5-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

14. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.2-րդ ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով 24.01.2022թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 որոշումը «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ, որոշում է կայացրել դադարեցնել Ընթացակարգի շրջանակում պայմանագիր կնքելու մասին և 17.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումները՝ 1-ին չափաբաժանի մասով:

15. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել 02.02.2022թ. 1-ին չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի նոր նիստ հրավիրելու և մասնակիցներին նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին ծանուցելու վերաբերյալ՝ ապահովելով Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:

16. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.02.2022թ. նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետի 1.1-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 24.01.2022թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.02.2022թ. ժամը 11:00-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով անցկացրել է նիստ, որին ներկա էին հրավիրված բոլոր մասնակիցները, բացառությամբ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի:

17. Նույն արձանագրության 1.2-րդ կետով արձանագրվել է, որ ապահովելով Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հրավիրված մասնակիցները /ներկա էին «Ճան Շին», «Ճանապարհ», «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ», «Նաիրի-Նունե», «Ծովագյուղի ՃՇՇ ՍՊ ընկերությունները»/ հավաստել են, որ և հայտով ներկայացված և բանակցությունների ժամանակ առաջարկած գնային առաջարկները ներկայացվել են 1 /մեկ/ տարվա հաշվարկով:

18. Նույն արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ որոշվել է հաստատել Ընթացաակարգի 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը համաձայն հավելվածի:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 18.02.2022թ. թիվ 01//497-2022 գրությամբ ներկայացված փաստաթղթերը, Ընթացակարգի հրավերը և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 24.01.2022թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 որոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

(...):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով.

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5-րդ կետի 5.2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:...

Նույն կետի 5.3-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով</u>*** և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: ***<u>Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր</u>***, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների

նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի:

Այսպես՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որը իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասի հիման վրա:

Ընթացակարգի հրավերի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար՝ ՀՀ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերումը, որը խմբավորված է 3 չափաբաժնում՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	**Մ-4 Երևան - Սևան - Իջևան – Ադրբեջանի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ80+920 վրա գտնվող Դիլիջանի թունելի**
2	Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր -Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ137+100 Պուշկինի թունելի
3	Մ-7 /Մ-3/ - Սպիտակ – Գյումրի - Թուրքիայի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ4+500 Նալբանդի թունելի

Աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

«ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գործողությունների իրավաչափությունը:

Ընթացակարգի հրավերի հավելված 2-ի՝ գնային առաջարկի համաձայն՝

Ուսումնասիրելով «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս»* ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____ -ն առաջարկում է ***<u>պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով</u>***.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			

Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ի՝ պայմանագրի նախագծի 1.2-րդ կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Պայմանագրի նախագծի 7.16-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

2023 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Պայմանագրի նախագծի հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 31.12.2026թ.-ը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով՝ մասնակիցների կողմից առաջարկված գներն են՝

1. Քյավառ սերվիս	120, 000,000	24,000,000	144,000,000
2.Ճան Շին ՍՊԸ	150,000,000	30,000,000	180,000,000
3. Ծովագյուղի ՃՇՇ ՍՊԸ	167,000,000	33,400,000	200,400,000
4. Ճանապարհ ՍՊԸ	180,000,000	36,000,000	216,000,000
5. Նաիրի-Նունե ՍՊԸ	350,000,000	0	350,000,000
6. ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ ՍՊԸ	625,000,000	125,000,000	750,000,000

Նույն արձանագրության 9-րդ կետի 9.1-րդ ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, և որ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որոշում է կայացրել նիստը կասեցնել և էլեկտրոնային ձևով ծանուցել բավարար գնահատված մասնակցին 17.12.2021թ. ժամը 15:00-ին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 2.1-րդ ենթակետի համաձայն՝ 17.12.2021թ. հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին ներկայացել են հրավիրված բոլոր մասնակիցները, բացի «Մ. Բուատ» ՍՊԸ-ի և Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ի:

Մասնակիցները Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջարկել են պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

1. Ճանապարհ ՍՊԸ	49, 999, 999	10,000,000	59,999,999
2. Նաիրի-Նունե ՍՊԸ	50,000,000	0	50,000,000
3. Ծովագյուղի ՃՇՇ ՍՊԸ	99,500,000	19,900,000	119,400,000
4. Քյավառ սերվիս	106,000,000	21,200,000	127,200,000
5. Ճան Շին ՍՊԸ	106,500,000	21,300,000	127,800,000
6. ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ ՍՊԸ	500,000,000	100,000,000	600,000,000

Նույն արձանագրության 2.2-րդ ենթակետի համաձայն՝ միաժամանակյա բանակցությունների ընթացքում «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձը գրավոր ներկայացրել է դիրքորոշու, որին ի պատասխան՝ գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է պարզաբանում, որ գնային առաջարկը անհրաժեշտ էր ներկայացնել մոկ տարվա սպասարկման արժեքի չափով՝ առաջնորդվելով հրավերով ներկայացված պայմանագրի նախագծի 4.1 կետով սահմանված է, որ «Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2022թ. կազմում է _____ (____տառերով____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:», ինչից պարզ է դառնում, որ գնային առաջարկն անհրաժեշտ էր ներկայացնել մեկ տարվա համար:

Ինչպես նաև ***բանակցություններից առաջ քարտուղարի կողմից ներկայացվել է բանակցման կարգ, որով սահմանվել է, որ բանակցում են մեկ տարվա արժեքի շուրջ:***

Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Ճանապարհ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի շրջանակներում «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից 24.12.2021թ. ներկայացված բողոքի հիման վրա Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից 24.01.2022թ. կայացվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 որոշումը, համաձայն որի «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի բողոքը բավարարվել է մասնակի, այն է՝ պարտավորեցվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին և 17.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումները՝ 1-ին չափաբաժնի մասով, այն հիմնավորմամբ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված դրույթը, որի արդյունքում խախտվել է Օրենքի 3-րդ և 5-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.2-րդ ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով 24.01.2022թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 որոշումը՝ «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ, որոշում է կայացրել դադարեցնել Ընթացակարգի շրջանակում պայմանագիր կնքելու մասին և 17.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումները՝ 1-ին չափաբաժանի մասով:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել 02.02.2022թ. 1-ին չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի նոր նիստ հրավիրելու և մասնակիցներին նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին ծանուցելու վերաբերյալ՝ ապահովելով Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.02.2022թ. նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետի 1.1-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձի 26.01.2022թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.02.2022թ. ժամը 11:00-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով անցկացրել է նիստ, որին ներկա էին հրավիրված բոլոր մասնակիցները, բացառությամբ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի:

Նույն արձանագրության 1.2-րդ կետով արձանագրվել է, որ ապահովելով Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հրավիրված մասնակիցները /ներկա էին «Ճան Շին», «Ճանապարհ», «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ», «Նաիրի-Նունե», «Ծովագյուղի ՃՇՇ ՍՊ ընկերությունները»/ հավաստել են, որ և հայտով ներկայացված և բանակցությունների ժամանակ առաջարկած գնային առաջարկները ներկայացվել են 1 /մեկ/ տարվա հաշվարկով:

Նույն արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ որոշվել է հաստատել Ընթացաակարգի 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը համաձայն հավելվածի:

Այսպիսով՝ քննության առարկա դարձնելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողություններն՝ ուղղված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցության անցկացման իրավաչափությանն, արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 2.2-րդ ենթակետով արձանագրելով, որ բանակցություններից առաջ քարտուղարի կողմից ներկայացվել է բանակցման կարգ, որով սահմանվել է, որ բանակցում են մեկ տարվա արժեքի շուրջ, գտնում եմ, որ գործել է գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների խախտմամբ հետևյալ հիմնավորմամբ՝

Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ի՝ գնային առաջարկի համաձայն՝ առաջարկվում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով:

Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ի՝ Պայմանագրի նախագծի 1.2-րդ կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն հրամանով հաստատված «ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների

պահպանման աշխատանքների կատարման և ընդունման» կարգի 2-րդ կետի համաձայն՝ պետական կարիքների համար ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների կապալի պայմանագրերը կնքվում են 5 տարի ժամկետով այն կապալառու կազմակերպությունների հետ, որոնք բավարարում են սույն կարգի գլուխ IV «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման մրցույթների առարկան և մրցույթներին մասնակից կապալառու կազմակերպություններին ներկայացվող նվազագույն տեխնիկական պահանջներ»-ում բերված նվազագույն տեխնիկական պահանջներին և ընտրվել են մրցութային կարգով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ի՝ Պայմանագրի նախագծի 7.16-րդ կետի համաձայն՝ ***<u>2023 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:</u>***

Պայմանագրի նախագծի հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 31.12.2026թ.-ը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերի համաձայն՝ «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների կատարումը նախատեսվել է իրականացնել 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ընդ որում՝ 2023 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով, այսինքն՝ վերը նշված դրույթներից պարզ է դառնում, որ Ընթացակարգի արդյունքում պայմանագիրը կապալառու կազմակերպության հետ կնքվելու է 5 տարի ժամկետով:

Միևնույն ժամանակ, արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ով՝ գնային առաջարկով սահմանվել է, որ առաջարկվում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով, այսինքն՝ պայմանագրի ընդհանուր գինն իրենից ներկայացնում է 2022-2026թթ. ընթացքում իրականացման ենթակա աշխատանքների ընդհանուր գին, հետևաբար գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ Ընթացակարգի շրջանակներում իրականցված գների նվազեցման շուրջ միաժամանակյա

բանակցությունների ժամանակ մասնակիցներին առաջարկելով բանակցել մեկ տարվա արժեքի շուրջ, գործել է վերը նշված Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների խախտմամբ, հետևաբար նման պայմաններում գտնում եմ, որ ոչ իրավաչափ բանակցությունների արդյունքներից բխող մասնակիցների կողմից առաջարկված գների նվազեցումը չի կարող դիտարկվել իրավաչափ, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ պետք է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.02.2022թ. նիստի թիվ 6 արձանագրությունն ամբողջությամբ, քանի որ նշված արձանագրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, ոչ իրավաչափ բանակցություններից բխող առաջարկված գների արդյունքները:

Միևնույն ժամանակ, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 26-րդ կետի 5-րդ և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետերով սահմանված պահանջների դրույթները, առաջարկված գների նվազեցման նպատակով պետք է իրականացնի միաժամանակյա նոր բանակցություններ՝ 2022-2026թթ. ընթացքում իրականացման ենթակա աշխատանքների համար առաջարկվող գների նվազեցման նպատակով, քանի որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 24.01.2022թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/119 որոշմամբ դադարեցվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ 1-ին չափաբաժնի մասով կայացված որոշումները, արդյունքում՝ դադարեցվել է առաջարկված գների նվազեցման նպատակով անցկացված միաժամանակյա բանակցությունները, հետևաբար գտնում եմ, որ միաժամանակյա բանակցությունների դադարեցման պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.02.2022թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրել արդեն իսկ դադարեցված բանակցության արդյունքներով առաջարկված գներն իրավաչափ չէ:

Միևնույն ժամանակ, հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, առաջարկված գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություն անցկացնելիս պետք է հիմք ընդունի նաև Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետի դ) պարբերությամբ սահմանված պահանջները, այն է՝ յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը, այսինքն՝ մասնակիցները պետք է հնարավորություն ունենան մինչև բանակցության

համար նախատեսված ժամկետի ավարտը վերանայեն իրենց կողմից ներկայացված գնային առաջարկները, ընդ որում՝ դրանք չպետք է պայմանավորված լինեն բանակցության ընթացքում հնչեցված ամենացածր գնային առաջարկով:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ բողոքը ենթակա է բավարարման մասնակի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից 11.02.2022թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝

1. Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

2. Բողոքը մնացած պահանջների մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**